անցեր է. վասն զի ըստ հին սովորութեան, Եգիպտոսէն բերել տրուած Ապոստոլական (եպիսկոպոսը) ծիշտ տասն հազար Թալէրի կը նստի եղեր. նաեւ սա զիտաւորութեամբ ալ նոյն եկեղեցականները իր քովը պահել կուզէ եղեր որպէս զի Գեր. եպիսկոպոսին ձեռամբ օր մը Թաղաւոր կարենայ օծուիլ. իսկ նոցին սրբութեան այնչափ երկար ժամանակ լուր չըկրնայ տալերնուն պատճառը, Թէ՝ նամակ յանձնելու յարմար մէկը երբէք չգտնելնին եւ Թէ՝ ճամբայներուն ապահով չըլլալն է եղեր:

Մեր աղաւտեալ եկեղեցականաց անմոռիրութեամբ յանմոռ առած տաժանելի ճանապարհորդութեան պատմութիւնը ահա այս տեղ լմնցունելէն ետքը, Հապէշաստանի կացութեան վրայօր ալ ակնարկ մը ընելը պատշաճ կը դատիմ:

Հապէշաստան կանոնաւոր Թաղաւոր մը կամ տիրապետ չունի, այլ քանի մը իշխանապետութիւն կամ լաւ եւս է ըսել, ապստամբապետութեան բաժնուած է, որոնց Թիւն այսօրուան օրս չորս է, եւ տիրապետաց անուններն ալ հետեւեալներն են. Տէճաճ Գասա, Թէկրիի երկրին իշխան. Վակշում Կօվանի, Ամարայի. Մէնիլիք (որ Թաղաւորաց ըսել է եւ Հապէշցիք կը կարծեն որ նոյն սերունդը Դաւիթ մարգարէի ցեղէն սերեալ է), Շոտի երկրին. եւ Կօալի Տէնթա, Կօնամի իշխան. սակայն այս Թիւը երբեմն կամ աւելի եւ կամ մէկի կիջնայ, որովհետեւ տիրապետութիւնը աւելի զօրաւորներն է. ով որ յաղթող ելնէ, ան կը դրուէ այս ինչ կամ այն ինչ երկիրը. այնպէս զի բոլոր Հապէշաստան ապստամբութեան կեդրոն մը դարձած է միշտ. այսօրուան իշխանաց մէջ միայն Տէճաճ Գասան դարուս քաղաքակրթութեան խիստ հակամէտ կերեւի, եւ կաշխատի որ օր ըստ օրէ իւր տիրապետական երկիրը ընդարձակելով բոլոր ժողովրդեան կացութիւնը բարւոքէ. բայց որովհետեւ զօրութեամբ միայն կրնայ հասնիլ իւր նպատակին, Անդղիոյ կառավարութենէն պաշտօնակալ մը խնդրած է որ իւր զօրքերը եւրոպական ձեւով կրթէ. նա ալ անմիջապէս Գրընէլ (զնդապետ) Գրդհամ անուն մէկը դրկեր է. որ հիմա զօրաց կրթութեանը կը պարապի եղեր, ինչպէս նաեւ ուրիշ եւրոպացիներ ալ բերել տուեր է Թէ՝ Անդանօթ եւ զնտակ ծուլելու, եւ Թէ՝ զէնք ու վառօդ շինել տալու համար:

Նամակիս երկարութեանը համար ընթերցողաց ներողամտութիւնը խնդրելով, եւ յուսալով որ տրուած մանրամասն տեղեկութիւնները հետաքրքրական կըրնան ըլլալ համազգեաց, Մնամ.

Տր. Յ. Յ. Մ՝ուէրէան։
(Մ՝ուէ. Թ. 107)։

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ

ՅՕՐԱԳՐՈՒԹԵԱՆՑ ՍԻՆՕԴԻ

Դեկ. 5։—Վանահայրն ս. Ստեփանոսի Ընդարձակի Աղուլեաց՝ ծերունի՝ Աբժ. Հաբօն վարդապետն Տէր Գրիգորեանց՝, ըստ խնդրանացն արձակեցաւ յիշեալ Ընդարձակի վանահայրութեան պաշտօնէն, և փոխադրեցաւ՝ ի ս. Գրիգոր Լուսաւորչի վանսն Շօռութայ։

,, 19։—Շամախւոյ Վիճակին Կոնսիստորիոյ առաջարկութեան համեմատ՝ Թովմիշէն գեղջ Իսրայէլ քահանայն Սարգիսբէկեան, յաղագս ծայրայեղ անհնազանդութեան և անուղղայ գնացիցն՝ խստագոյն ընկեցաւ քահանայական պաշտօնէն։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԿՐՕՆՔ

ԳԻՏՈՒԹԱՆՑ ԹՇՆԱՄԻ ՁԷ.

Աշխարհիս մէջ կան այնպիսի կրօններ՝ որ գիտութեանց հետ չեն կարող ընկերանալ. բայց Քրիստոնէական կրօնը կարող է համաձայն և անվեհեր հաշտութեան ձեռք կարկառել ամենայն գիտութեանց և նոցա հետ զուգընթաց գնալ։ Գիտութիւնը սահմանելով ստոյգ հմտութիւն բնութեան անյեղլի օրէնսաց նկարագրեալ իրերաց հետ կցորդուած արարածոց և նոցա առ միմեանս վերաբերութեանց, ճշմարիտ կրօնին ոչ երբէք վնասելու անկարող պէտք է լինի, այլ հարկաւոր է որ ճշմարիտ կրօնը իրրև թագուհի մէջ օրիորդաց և աղախնանաց՝ ծառայութիւն ընդունի ի համարէն գիտութեանց։

—Արդէն ինչ տղեկուրէ, ծանուցանած է այն կարծիքը, թէ Քրիստոնէական կրօնն գիտութեանց բարեկամ, չէ՛ և անոր պաշտօնեաներն գիտութեանց թշնամի են։

Ըստ իմ կարծեաց այս ցուրտ զրպարտութիւնը օտարներէն անցած է մեզի, և այս խօսքերուն բուն հեղինակները ուրիշ ազգաց մէջ նայելու է. բայց մեր ազգային մէջ տարածուիլն և իբրև ճշմարտութիւն ընդունուիլն գաւուիլն կողմնակի տեսութեան արդիւնք և անզգոյշ հաւատալութեան պտուղ պէտք է համարել։ Մենք չենք ժխտեր ազգային եկեղեցականութեան ներկայ վիճակը, որ սակաւ բացառութեամբ ագիտական է. բայց այս ցաւալի վիճակին բուն պատճառն ինչպէս որ ազգութիւնը չէ, նոյնպէս և ոչ իսկ Քրիստոնէական կրօնը՝ ոչ ուղղակի և ոչ իսկ անուղղակի կամ բացառիկ պարագաներ մընկերքն։ Ասոր անկրաւութիւն կը համարիմք և տարապարտուց զրպարտութիւն ընդդէմ սրբութեան կրօնի՝ կարծելն թէ կրօնն գիտութեանց բարեկամ չէ, և իւր պաշտօնեայներն գիտութեանց թշնամի են։ Եթէ այսպէս էր, հարկաւոր էր կրօնի աւանդութեանց մէջ սկզբունք մը կամ դրութիւն մը ցոյց տալ, որով կրօնն և գիտութիւնք անջրպետէին իրարմէ. նոյնպէս ամէն ժամանակի մէջ և առանց բացառութեան՝ Քրիստոնէական կրօնի պաշտօնեայներն ներկայացունելու էին գիտութիւններն արհամարհող տգիտաց խումբ մը. բայց պարզ հայեցողութիւն մը դէպի Աստուածաշունչ սուրբ գիրքն և ազգային պատմութիւնն՝ սոյն ընդհակառակը ցոյց կու տան մեզ։

Աստուածաշունչ սուրբ գրոց թէ Հին և թէ Նոր Կտակարանաց եթէ՛ պատմական եթէ՛ վարդապետական և եթէ՛ օրէնսդրական մասանց մէջ չէ՛ հնար նկատել այնպիսի մի սկզբունք կամ դրութիւն, որ ընդհակառակն բոլոր գիտութիւնները, կամ ի մասնաւորի այս կամ այն գիտութիւնը անօգուտ, վնասակար և խորշելի համարի. ընդհակառակն Հին Կտակարանին նախնական ժամանակներուն զննելով կը տեսնենք որ Աստուածաշունչն մարդկութեան նախահայրն կը ներկայացունէ գիտուն և իմաստուն մարդ մի, ոչ եթէ ուսմամբ կամ հետևողութեամբ այնպէս եղած, այլ Աստուծոյ ձեռքը անեղծ վիճակի մէջ ստեղծագործուած ժամանակ այդ բաներն իբրև օժիտ պարգև առած էին։ Ադամ առանց դպրոցի և ուսումնարանի աշակերտութեան քաջ բնապատում և ճարտար երկրագործ էր, ինչպէս յայտնի է իւր բաքանչիւր կենդանեաց իրենց բնութեան համեմատ յարմար անուններ դնելէն. և դրախտին նման վայելուչ և գեղեցիկ պարտէզ մը մշակելէն. այս երկու առարկայներն հինգ գիտութեանց ծիւղերուն մէջ մասնաւոր տեսակներ են, զորս աշխատութեամբ և հանապազորդ փորձերով մարդիկ կ՚ջանան կատարելագործել։ Ի՞նչ էր Ադամայ անկեալ վիճակը, եթէ ոչ տգիտութեան խաւար մը՝ որ մարդուս իմացական կարողութիւնները մթացնէր, որուն մէջ մարդ իւր հոգւոյն և մարմնոյն պիտոյքն հայթայթելու համար աշխատութեան պէտք պիտի ունենար։ Եթէ հոս ըսելով պէտք է նկատել բաց հոգևորին հոգւոյն պէտքերն, և զգալապէս մեր մարմնոյն պիտոյքը, ուրեմն Ադամայ անկեալ վիճակը կրնամք նկատել այնպէս՝ որպէս մի տգիտական վիճակ, յորում ՚ի հոգւոյ և ՚ի մարմնոյ բաղկացեալ մարդը ինքզինքը խնամելու համար միայն գիտութեամբ զարգացունելոյ պէտք ունի. որպէս զի իմանայ թէ հոգւոյն պիտոյքներն ի՞նչ են, և մարմնոյն

կարօտութիւններն ի՞նչ։ Եթէ մարդս անհատականութեան մէջ այսպէս, ուրեմն եւս տեսնել ընկերական կենաց վիճակի մէջ. յորում անհատութեանց եւ ընկերական յարաբերութեանց հետ ախտալից եւ կարօտութեանց եւ հետեւապէս գիտութեանց սահմաններն եւ եւս կ'ընդարձակին։ Ո՞չ ապաքէն Իսրայէլացւոց առաջնորդ ըլլալու սահմանուած Մովսէսը՝ մի Եգիպտացի իմաստունէ աւելի իմաստուն մարդ էր, որ իւր մանկական հասակին մէջ կատարելապէս կրթուեցաւ Եգիպտական դպրոցներու մէջ։ Ո՞չ էր Իսրայէլի թագաւորաց մէջ ամենէն հռչակաւորն Սողոմոն, եթէ, ոչ մի գիտուն եւ իմաստուն որպէս գերազանցելով իւր նախորդ եւ ժամանակակից իմաստուններէ, եւ անհաւատալի յապագայից. Ի՞նչ էին արդեօք նորա գիտութիւնները, մինչ ինքն որ ինք խօսի, «Զի Նա ետ ինձ զանվրէպ գիտութիւն եղելոցս, գիտել զհաստատութիւն աշխարհի, եւ զազդեցութիւն բնութեանց։ Զսկիզբն եւ զկատարած եւ զմէջ ժամանակաց. զդարձմանց փոփոխումն, եւ զշրջել ժամանակաց։ Զտարեաց բոլորմունս եւ զաստեղաց դիրս։ Զբարս անասնոց, եւ զզայրութիւն գազանաց. զհողմոց բռնութիւնս, եւ զխոհս մարդկան. զայլակերպութիւնս տնկոց. եւ զզօրութիւնս արմատոյ. որ ինչ ծածուկ՝ եւ որ ինչ յայտնի՝ գիտացի»։ Իմաստ. է. 17-21

Արդ եթէ այս խօսքերուն մէջ յիշուած գիտութիւններն այժմու ժամանակիս ճանչցուած անուններուն փոխածենք, կ'անեննք որ Սողոմոնի իմաստութիւնը բաղկացողներն էին աշխարհագրութիւն տեսակներուն, տնկաբաշխութիւն, թուաբանութիւն, տումարագիտութիւն ժամանակագրութիւն, երկրաչափութիւն, բնական պատմութիւն, զանազան լեզուներ, անկաբանութիւն, բժշկութիւն, որոց գիտութիւնը իմաստութիւն համարելով, կ'ըսէ թէ այս ամենը յԱստուծոյ շնորհեցաւ իրեն, Իմաստ. է. 21։ Այսպէս բոլոր սուրբ գրոց մէջ չէ՛ հնար նշմարել մի այնպիսի տեղ, որ տգիտութիւնը մարդկային կենաց անբնական վիճակ չ'համարուի, մանաւանդ առակաց եւ իմաստութեան գրոց մէջ արարածոց գիտութիւնը միշտ գովուած եւ հռչակուած է իբրեւ մի Աստուածային պարգեւ։ Հա՞րկ է արդեօք ՚Նոր Կտակարանն եւս հետազօտել այս մասին փաստաբանութիւն մը ձեռք բերելու համար։ Ձանձրութենէ խորշելով աւելորդ աշխատութիւն կ'համարենք այդ, եւ բաւական կ'սեպենք Սրբազան Աւետարանչին վկայութիւնը Տեառն մերոյ մանկական հասակին նկատմամբ, «Յիսուս զարգանայր իմաստութեամբ եւ հասակաւ եւ շնորհօք յԱստուծոյ եւ ՚ի մարդկանէ»։ Ղուկ. Բ. 51։ Այս զարգացումը կ'նշանակէ Յիսուսի մարմնոյն հետ նորա մարդկային մտաւորական կարողութեանց օրըստօրէական աճումը արտաքին իմաստութիւններով՝ որոյ առարկաներն են արարածք եւ մեր անձէն դուրս եղած նիւթեղէնք։ Այս ստուգութիւնը բաւական է հերքելու այն թիւր կարծիքը թէ ըստ ինքեան Քրիստոնէական Կրօնն արտաքին գիտութեանց թշնամի է, եւ ապացուցանելու թէ ոչ միայն նորա պաշտօնեայներն թշնամի չեն գիտութեանց, այլ եւ մեծամեծ եւ նշանաւոր գիտուններ մեծ նշանակութիւն ունեցել են կրօնի տաճարին մէջ։

Սակայն դարձունելով մեր նկատողութիւնը մեր Ազգային ներկայ Եկեղեցականութեան վերայ, նորա այժմու վիճակը պէտք չէ տարակել վերագրելով ճշմարտութեանց դէմ. վասնզի մեր տգիտութիւնը եթէ հետեւութիւն լինէր մի կրօնական վարդապե-

թեան կամ սկզբունքի, հարկ էր 'ի սկզբանէ անտի մինչև ցայսօր առանց բացառութեան մեր կրօնի պաշտօնեայներն լինէին տգէտ և գիտութեան ատելող մարդիկ. սակայն ներկային և անցելոց պատմութիւնը չեն արդարացուներ այդպիսի դատաստան: Պատմութիւնը ցոյց կուտայ մեզ Եկեղեցական վերին իշխանութեան դասակարգին մէջ նշանաւոր Կաթողիկոսներ, որ վերաբերութեամբ իրենց ժամանակին արժանի եղեր են իմաստուն համարուիլ. նոյնպէս ապացոյցներ ունիմք հաստատելու թէ ամէն ժամանակ մեր ազգին մէջ գիտութիւնք առաւելապէս մշակուեր և ծաղիկ են Եկեղեցականաց ձեռօք: Տպագրութիւնը՝ որ գիտութեանց և արուեստից ծաւալելուն հզօրագոյն միջոցն և առիթն եղաւ, առաջին անգամ մեր Ազգին մէջ Եկեղեցականաց ձեռօք մուտ գտաւ և ծաղկեցաւ:

Մինչև հիմայ ըսուածներէն կ'հետևի ուրեմն՝ որ այս յուրա զգաստութեան փաստաբաններն՝ եթէ սատանիկ միտումներ թաքուած չեն, խարէութեամբ կ'ջանան հասնել իրենց ծածկեալ նպատակին, և ասոր համար առանց ընդհանուր ազգին մտաւորական զարգացման վիճակը հաւաքապէս նկատելու, մի միայն եկեղեցականութեան վերայ կ'ամբաստանեն իրենց տեսութիւնը, որպէս թէ նա առանձին և որոշ մարմին մը լինելով ամենևին անկցորդ աշխարհական — ընկերական մարմնոյն. և այս ծուռ տեսութիւնն շառաւիղն նկատելով այն մեծ և վնասակար սխալման դուրը կ'զլխին, մատնաւորելով եկեղեցականութեան վերայինչ որ ընդհանուր ազգային ընկերական մարմնոյն վրայ պէտք էր ասել: Բ. սա այսմ փոխանակ կրօնն և կրօնականութիւնը զբսպարանելու իրրև թշնամի գիտութեանց, Ալան և հայութիւնը հարկ էր ամբաստանել միևնոյն յանցանքով, որ է անտեղութիւն անտեղութեանց:

ԳԷՈՐԳ ԵՊԻՍԿՈՊՈՍ
Վանահայր Աբմաղ— վանաց:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼՈՒՍԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ. — ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼՈՒՍԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ ՈՒՍԵԱԼ ԶԱՒԱԿՆԵՐ ՊԻՏՔ ԵՆ.

Ե.

Ամէն լուսաւոր գաղափար ունեցող ազգային՝ նկատելով Եւրոպացւոց օրէցօր թէ՛ նիւթապէս և թէ՛ բարոյապէս զարգացումը և Հայաստանի այժմեան տարտամ և անտարբեր վիճակը՝ հետևեալ կերպով կը խօսին իրարու. «Ի՛նչպէս, Հայաստանի լուսաւորութեան համար՝ ուսեալ զաւակներ պէտք են, ուրեմն (հետևցնում են) նախ՝ Եկեղեցւոյ ընտիր և գործունեայ ժառանգաւոր հասցնելու համար՝ ամէնեւիթական կարողութիւն ունեցող վանքերի մէջը հաստատուին կղերանոց կամ ընծայարան, Տպարան, և ընթերցարան. այս օրինակը ահա գործնական ապէս ցոյց տուին մեր Վեհափառ Հայրապետ Գէորգ Գ. Արբաղնագոյն Կաթողիկոսն, և սուրբ Երուսաղէմայ Արժանընտիր Պատրիարք Հայոց Արբաղան Աբքեպիսկոպոսն. որոնք ընդհանուր Ազգի յոյսը պատկելու, և մեր նախնի մեծագործ սուրբ հարց զբաղելի գործոց նորոգիչ համարուելու արժանաւորութիւնն ունեցան. երանի՜ թէ միւս երևելի վանքերն* էլ նոցա ազ-

*) Այն այս յօդուածը գրող Արժ. Բահանայն ինչպէս կերևի, տեղեկութիւն չունի Նիկոմիդիոյ մերձ Ձրմաշու Զարխարեան Ս. Աստուածածնի վանուց վերայ. որ իրր քառասուն տարիներէ ի վեր ունի Ժ—ան—դ—ր—ց Ո—ն—ն—ա—ն, որ քան բաւակա-